ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01/24
«ՄԱՐԶԱԲՆԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ, ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿԻԲԵՌԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

2023 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԺԱՄԸ՝ 11:00-ԻՆ

ԿԱՅԱՑԱԾ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ)՝ հեռավար,

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)՝ հեռավար,
Վերոնիկա Խորասանյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի անդամ),
Անուշ Մխիթարյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի անդամ),
Նարեկ Առաքելյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության մասնագետ (Հանձնաժողովի անդամ),

Մարիանա Մինասյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում:
2. Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստի քննարկում:
3. Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերների տեքստերի քննարկում:
4. Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկների ձևաչափի քննարկում:
5. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

1) Օրակարգի 1-ին հարց.

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց հանձաժողովի առաջին նիստի օրակարգի հարցերը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել հանձաժողովի առաջին նիստի օրակարգը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2) Օրակարգի 2-րդ հարց.

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3) Օրակարգի 3-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերի տեքստերը:

Օրակարգի 3-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

4) Օրակարգի 4-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց գնահատման թերթիկների ձևաչափի և գնահատման չափանիշները:

Օրակարգի 4-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկների ձևաչափը (կցվում է):

Կողմ՝ 5, դեմ 0:

5) Օրակարգի 5-րդ հարց

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա, վայրի, ժամի քննարկում:

Օրակարգի 5-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը սահմանել **2023 թվականի դեկտեմբերի 14-ը ժամը՝ 11:00-ն**, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 605 աշխատասենյակում, հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Վերոնիկա Խորասանյան

Անուշ Մխիթարյան

Նարեկ Առաքելյան

Մարիանա Մինասյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/24
«ՄԱՐԶԱԲՆԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ, ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿԻԲԵՌԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)
2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (հանձնաժողովի անդամ),

Վերոնիկա Խորասանյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Անուշ Մխիթարյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Նարեկ Առաքելյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Մարիանա Մինասյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Օրակարգային հարցեր.

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում,
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Ա. Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված:

1) Օրակարգի 1-ին հարց.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից **«ԵՔ-ԴՄ-ՄԳ 01/24»** ծածկագրով դրամաշնորհային մրցույթի ընթացակարգին հայտ է ներկայացրել «:Բուն» գիտամշակութային հիմնադրամը:

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեներ	Մասնակիցների էլ. հասցեները	Մասնակիցների հեռախոսահամարներ	Մասնակիցների առաջարկած գինը /ՀՀ դրամ/
1.	«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 133,	boon@boon.am	+374 77 110027	4 980 000

Հայտերի ուսումնասիրությունից հետո Հանձնաժողովը նկատեց.

1. «:Բուն» գիտամշակութային հիմնադրամը չի ներկայացրել կազմակերպության կանոնադրությունը, նմանատիպ ծրագրերի իրականացման փորձառությունը հավաստող պայմանագրերի պատճենները ինչպես նաև ներկայացված ծրագրի բյուջեի «Բ» հոդվածի 2.3, 2.4, 2.5 և 2.7 տողերում նշված ծախսերը հիմնավորված չեն:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

1. Առաջարկել կազմակերպությանը մինչև 2023 թվականի դեկտեմբերի 18-ը ժամը՝ 16.00-ն, Հանձնաժողովի կողմից արձանագրված անճշտությունները շտկել և ուղարկել հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին՝ mariana.minasyan@escs.am:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2) Օրակարգային 2-րդ հարց.

Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 18-ը ժամը՝ 16.00-ն, ՀՀ ԿԳՄՍՆ 605 աշխատասենյակում, հասցե՝ Վազգեն Սարգսյան 3, ք. Երևան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Վերոնիկա Խորասանյան

Անուշ Մխիթարյան

Նարեկ Առաքելյան

Մարիանա Մինասյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03/24
«ՄԱՐԶԱԲՆԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ, ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿԻԲԵՌԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)
2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ),

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (Հանձնաժողովի անդամ),

Վերոնիկա Խորասանյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի անդամ),

Անուշ Մխիթարյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի անդամ),

Նարեկ Առաքելյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության մասնագետ (Հանձնաժողովի անդամ),

Մարիանա Մինասյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում:
2. Գնահատումների ամփոփում:

1) Օրակարգի 1-ին հարց.

Արթուր Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված և ներկայացրեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին հարցի քննարկումից հետո Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի օրակարգը՝ 5 կողմ, 0 դեմ:

2) **Օրակարգի 2-րդ հարց.**

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին փոխանցեց **ԵՔ-ԴՄ-ՄԳ 01/24** ծածկագրով «Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը» դրամաշնորհային մրցույթին դիմած կազմակերպությունների մրցութային հայտի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Հանձնաժողովի անդամները քարտուղարին փոխանցեցին իրենց կողմից լրացված և ստորագրված գնահատման թերթիկները /կցվում է/՝ մրցույթին դիմած հայտի գնահատման արդյունքները ամփոփելու համար:

Համաձայն հանձնաժողովի գնահատման արդյունքների ամփոփման՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Տեղեկություն բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ	Տեղեկություն մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու վերաբերյալ	Մասնակիցների ներկայացրած ֆինանսական նախահաշվի ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/	Տեղեկություն հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին, ինչպես նաև հայտերի վերաբերյալ հարցումների մասին	Հայտերի գնահատման արդյունքները (միջին գնահատական)
1.	«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ	Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա չեն	Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	4 980 000	Հայտում փոփոխություն և հայտի վերաբերյալ հարցումներ եղել են	0

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «:Բուն» գիտամշակութային հիմնադրամի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից ներկայացված առաջարկը նկատեց, որ Կազմակերպության կողմից առաջարկված ծրագիրը չի համապատասխանում դրամաշնորհի տրամադրման հիմնական պայմաններին, մասնավորապես՝ առաջարկվող դրամաշնորհային ծրագրում ապահովված չէ

դրամաշնորհային հրավերի Մաս 1-ի 1.1 կետով սահմանված պահանջը՝ «Հաղթող ճանաչված մասնակցի դրամաշնորհային հայտով ներկայացված ծրագրում ընդգրկվող շահառուների թիվը պետք է կազմի առնվազն 60 երիտասարդ ինչպես ՀՀ-ից, այնպես էլ՝ ԱՊՀ մասնակից պետություններից: Ընդ որում, Մասնակիցը իր ծրագրում, ՀՀ երիտասարդների՝ առկա կամ առցանց ձևաչափով մասնակցությունից բացի, պետք է ապահովի նաև ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդների մասնակցությունը՝ առցանց տարբերակով»:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 24.12.2003 թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման 32-րդ կետ, ա) ենթակետով՝

1. ԵՔ-ԴՄ-ՄԳ 01/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը հայտարարել չկայացած:
2. Հաստատել **ԵՔ-ԴՄ-ՄԳ 01/24** ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:
3. Քարտուղարին՝ ARMEPS համակարգով լուծարել **ԵՔ-ԴՄ-ՄԳ 01/24** ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի գործընթացը:
4. Հանձնարարել պատասխանատու ստորաբաժանմանը՝ ձևավորել նոր գնահատող հանձնաժողով «Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի (առողջ և անվտանգ սննդի օգտագործումը, ֆիզիկական ակտիվությունը, անվտանգ վարքագծի պահպանումը, վնասվածքների կանխարգելումը, ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործումից զերծ մնալը) խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում» միջոցառման իրականացման նպատակով դրամաշնորհի հայտարարման նոր գործընթաց սկսելու համար:

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Վերոնիկա Խորասանյան

Անուշ Մխիթարյան

Նարեկ Առաքելյան

Մարիանա Մինասյան